լսելոց ծնունդս իմաստնոցն օտարաց՝ ի մերս կնոջին ընտրանաւ փոխաբերեցին։

Դարձեալ և ի նոյին իսկ յԵւրոպականացն ազգաց լեզուս քաջ ներհմտացեալք աշակերտեալքն Ճեմարանիս, եկեսցէ ժամանակ՝ զի զմերոց ազգային ուսանողաց՝ զեկեղեցականացն և զքաղաքականաց՝ զստոյգ նկարագիրս առաջի արասցեն իմաստնոց նոցին, և ոչ ևս իշխեսցէ ոք ուրեք խրամատս իմն ճշմարտութեան ի ստուգապատում մատենագիրս մեր արկանել կամ գտանել, որպէս ոմանք յանգգամից և ի հարևանցիկ հընախուզից ժամանակիս, — թէպէտև յազգայնոցն իսկ մերոց՝ և յայլմէ կողմանէ պատկառելի առանց՝ — յախուռն կարծիս և կասկածանս նիւթեցին ի մեր իսկ ուսուցս զանկեղծիկ հաւատարմութենէ առաջնոցն մերոց պատմագրաց, և մանաւանդ զանակնառու ճշմարտասիրութենէ և ըղմանրակրկիտ ընտրողութենէ քերթողահօրն իսկ մերոյ Մեծին Մովսիսի Խորենացւոյ, և զառաջնորդի նորա զՄար Իբայն Կատինայ զանգին յիշատակարանն ընդ ստայօղս ինչ և ընդ առասպելաբան կեղծիս այլոց ոմանց աննշան ազգաց գրել ոչ զանգիտեցին.

Բայց ես զիարդ ի սակաւամասնեայ բանից սահմանս զօրեցից արդեօք բովանդակել և զայլն ևս բիւրապատիկ արդասիս բարեաց, որոց ի Ճեմարանէ աստի սրբոյ Աթոռոյդ իրաւամբ ըսպասէ ազգս մեր և աշխարհ և Եկեղեցի, եթէ ոչ այժմիկ վաղվաղակի՝ սակայն աննշուշտ զկնի ամաց ինչ անցանելոյ՝ սովիմբ այսու գոգցես կարգաւորութեամբ և սոյնպիսեաւ տածողական անխոնջ խնամակալութեամբ Հայրապետիդ մերոյ մեծի. Ցայնժամ՝ ապա լիովին արդարացուցէ սա զիւրն անուանակոչութիւն՝ այժմէն տենչալի և անուշ հնչեցեալ յունկն ամենայն մերազնեայց. և պանծասցի յամս յամայր պսակեալ յոյժ արդարոցի և յոյժ պատշաճական ըստ իւր վերատեսութեամբս «Գէորգեան Ճեմարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի»՝ ի հիացումն կարգեալ յաւերժաբար մերոցն և օտարաց:

Կեցցէ՜ ուրեմն Ձերդ Վեհութիւն՝ օրհնեալ և բարեբանեալ այսօր ի մէնջ և ի բովանդակ Հայկազեանս գրուցէ բանիւ սաղմոսերգուին՝ եթէ «Օրհնեսցի պսակ տարւոյ քաղցրութեան քո»։ Կեցցէ՜ մինչև ցյիսներեակ յոբելինի գեղապօրէն տաճարիս իմաստութեան, և անդր ևս ընդ դարս յոլով՝ յանմահութիւն կնքեալ զԱնուն Ձեր և զմեծագործութիւն.

## ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՑՐԵՑԵԱԼ ՄԱՍԻՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ.

(Շ—ր——ն—կ——թի—ն)։

### Ի ՍՈՒՐԲ ԽԱՉ ՔԱՂԱՔԻ (Մ—ճ——)

| | |
|---|---|
| Առաքել Արզումանեանց | 10 |
| Ղարիպ Քովխայեանց | 10 |
| Գրիգոր Կուպեցեանց | 10 |
| Զաքարիա Ռոմանոսեանց | 1 |
| Ցարութիւն Թաղէոսեանց | 1 |
| Օհան Սարուխանեանց | 3 |
| Զաքէոս Ղնդիովեանց | 3 |
| Ղուկաս Գրիգորեան Ղարեանց | 1 |
| Վարազ Տէր Աւագեանց | 1 |
| Ցարէթ Հուսմեանց | 1 |
| Աղէքսանդր Մարգարեանց | 1 |
| Մկրտիչ քահ. Խերումեանց | 1 |
| Գէորգ քահ. Աղայեանց | 5 |
| Ցովսէփ քահ. Մուրդուղեանց | 3 |
| Զաքարիա քահ. Սերեբրակեանց | 1 |
| Ցարութիւն Ցօնանեանց | 1 |
| Աստուածատուր Աբրահամեանց | 1 |
| Մնացական Ղալաբէկեանց | 1 |
| Աթանաս Դարալալեանց | 1 |
| Ալէքսան Կարախանեանց | 1 |
| Դաւիթ Օնանեանց | 1 |
| Արի Ցովսէփեան Զաքարեանց | 1 |
| Աղաբէկ Աղսաղալեանց | 1 |
| Զաքարիա Հխպարեանց | 3 |
| Աւագ Սարուխանեանց | 1 |
| Ցովհաննէս Ճիկարխանեանց | 1 |
| Ոսկան Աղսաղալեանց | 1 |
| Ցարութիւն Էյվազեանց | 1 |
| Մակար Մարգարեանց | 1 |

| | |
|---|---|
| Յարութիւն Հաճկէլոեանց | 1 60 |
| Սարգիս Սերբերեակեանց | 3 |
| Միքայէլ Պարիպեանց | 1 |
| Եփրեմ Մնացականեանց | 1 |

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

| | |
|---|---|
| Լօրիս Մէլիքեանց | 30 |
| Մինաս Աւագ քահ. Միրանեանց | 3 |
| Խաչատուր Խումարեանց | 3 |
| Զօրաբ Կարակէօզեանց | 3 |
| Վարդան Տէր Աստուածատրեանց | 3 |
| Գէորգ Տէրիջանեանց | 3 |
| Գրիգոր Փարսադանեանց | 1 |
| Յովհաննէս Տէրտէրեանց | 1 |
| Գէորգ Կիրէյեանց | 3 |
| Նիկողայոս Մամուլեանց | 1 |
| Պօղոս Լիսիցեանց | 1 |
| Սիմէօն Օհանեանց | 1 |
| Միքայէլ Սիմէօնեանց | 2 |
| Մի Վրացի | 3 |

Ի ԹԷՄԻՐԽԱՆ - ՇՈՒՐԱՑ

| | |
|---|---|
| Յովհաննէս Աւագ քահ. Փարխմուզեանց | 3 |
| Յովհաննէս Հուշանեանց | 5 |
| Դաւիթ Զարգարեանց | 5 |
| Յակոբ Թօխաթէլեանց | 1 |
| Կարապետ Կաքայեանց | 3 |
| Գէորգ Փարխմուզեանց | 2 |
| Բժիշկ Յակոբ Գալստեանց | 3 |
| Նիկողայոս Իւզբաշեանց | 3 |
| Բաղդասար Սարգարեանց | 3 |
| Գէորգ Մէգնիկեանց | 3 |
| Յարութիւն Դէմուրեանց | 3 |
| Սահակ Օրբէլեանց | 1 |
| Բարսեղ Գիլանեանց | 1 |
| Իշխան Լեւոն Մելիքեանց | 30 |

Ի ՊԵՏՐՈՎՍԿ

| | |
|---|---|
| Գէորգ Տէր Դաւթեանց | 10 |
| Գրիգոր Եարալեանց | 1 |
| Սիմէօն Սիմէօնեանց | 1 |
| Գաբրիէլ Գէորգեան Աւանեանց | 10 |
| Աւետիս Տուրփոյեանց | 1 |
| Մկրտիչ Տէր Օհանեանց | 1 |
| Աւագ Յովակիմեան Գլադեանց | 1 |
| Լեւոն Սափարեանց | 5 |
| Խիթար Խիթարեանց | 3 |
| Յովհաննէս Բաղդասարեանց | 1 |
| Մարգար Գալստեան Յակոբեանց | 1 |
| Մակար Յարութիւնեանց | 1 |
| Դաւիթ Խատիսեանց | 5 |
| Սարգիս Մելիքեանց | 1 |
| Եսայի Պօպովեանց | 3 |
| Բարդուղիմէոս Եղիկարեանց | 2 |

(Ի յետ-եայ-)

ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ ԲԻԻԶԱՆԴԱՆ

## ՄԱՆՉԷՍԹԸՐԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

### ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ

Շատեր գիտեն անշուշտ թէ ինչպէս Եւրոպիոյ այլ եւ այլ գլխաւոր կողմերը, նոյնպէս եւ Մանչէսթըրի մէջ բաւական ատենէ ի վեր Հայազգի գաղթականութիւն մը կայ հաստատուած, որ այսօր բաւական մեծկակ թիւ մը կազմելու հասած է, սա- կայն քիչ մարդ կայ՝ որ յիշեալ Հայ գաղթականութեան ազգային եւ ընտանեկան կենցաղավարութեանը, վաճառականական ընթացիցը, եւ այլ ինչ ինչ պարագաներու մասին ունեցած վիճակին ու գնացքին նկատմամբ գոնէ բաւական տեղեկութիւն ու ծանօթութիւն մը ունեցած ըլլայ։

Հայ գաղթականութեանց, ուր ուրեք որ կան, վիճակին վրայօք շարունակ տեղեկութիւն ստանալն եւ անոնց հետ դէթ բարոյապէս յարաբերութեան մը մէջ գտնուիլն հարկ եւ կարեւոր լինելով մեզ համար, սորա չգոյութիւնը մեծ պակաս եւ թերութիւն մը կը համարուի, եւ այդ պակասն ալ մեք կուզեմք այսօր կարելի եղածին չափ ըստ մեր կարեաց լնուլ։

Այս մասին Մանչեսթերէն, այն կողմերը երկար ատենէ ի վեր գտնուող մեր մէկ բարեկամին կողմանէ նամակ մը ընդունած ըլլալով, որոյ մէջ Մանչէսթերի յիշեալ ազգայնոցը վարած կենացն ու ընթացիցը ամեն մէկ պարագայներուն նկատմամբ մանրամասն եւ երկարօրէն տրուած տեղեկութիւնքն